Արձանագրություն N 4

«ՍՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-01/19» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի
Գնահատման նիստի

** հ. Գորայք** «12» սեպտեմբեր 2019թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան-երկրաբան-ինժեներ
հանձնաժողովի անդամներ՝ Ս.Մուսաթյան- առաջատար մասնագետ- հաշվապահ
Ս.Անտոնյան-սոց.աշխատող
հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Գրիգորյան-գնումների համակարգող

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին

1. Ընդունել ի գիտություն.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի Սիսիանի (Նոր Բակ) «Նորոգշին»ԲԲԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.1. Ընտրված մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի համաձայն մասնակցի մասնագիտական փորձառությունը, տեխնիկական միջոցները և աշխատանքային ռեսուրսները համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.2. Հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին տրամադրել է գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը:

1.3. Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

2. Բաց մրցույթի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

2. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները ՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՍՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-01/19» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները և Սիսիանի (Նոր Բակ) «Նորոգշին»ԲԲԸ -ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

3. «ՍՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-01/19» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

3. Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՍՄԳՀ-ԲՄԱՇՁԲ-01/19» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է հայտարարվում **Սիսիանի (Նոր բակ) «Նորոգշին» ԲԲԸ**-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4.1. Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը **Սիսիանի (Նոր բակ) «Նորոգշին» ԲԲԸ** -ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

4.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ սահմանել 5 օրացույցային օր::

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ :

Նախագահ՝ _____ Ա. Մարգարյան

Անդամ՝ _____ Ս. Մուսայան

_____ Ս. Անտոնյան

Քարտուղար՝ _____ Ս. Գրիգորյան